

ՎԴՄՕ ուսումնասիրող հանձնաժողովի

միջանկյալ զեկույց թիվ 1



ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

օրարերկրյա պետություններից ստացված եւ միջազգային
կազմակերպություններից ստացված փոխառությունների,
վարկերի, դրամաշնորհների եւ մարդասիրական
օգնությունների օգտագործման արդյունավետությունն
ուսումնասիրող ժամանակավար հանձնաժողով

ՎԴՄՕ ուսումնասիրող հանձնաժողով

Ներկայացում

ՎԴՄՕ հանձնաժողովը ստեղծվել է ՀՀ ԱԺ որոշմամբ 2003 թ. սեպտեմբերի 10-ին: Նրա կազմի մեջ ընդգրկվել են Ազգային ժողովի բոլոր խումբ-խմբակցությունների, ինչպես նաև անկախ պատգամավորների ներկայացուցիչները: Հանձնաժողովի կազմն է.

1.	Վահան Հովհաննիսյան՝ նախագահ	ՀՀԴ
2.	Գագիկ Մելիքյան՝ փոխնախագահ	ՀՀԿ
3.	Սամվել Նիկոյան	ՀՀԿ
4.	Մեխակ Մխիթարյան	ՕԵԿ
5.	Հակոբ Հակոբյան	ԺՊ
6.	Հռիփսիմե Ավետիսյան	ՄԱԿ
7.	Արշակ Սադոյան	Արդարություն
8.	Բորիս Մուրադյան	ԱՄ
9.	Վոլոդյա Բադալյան	Անկախ
		պատգամավոր

ԱԺ որոշման համաձայն՝ ձևավորվեց հանձնաժողովի փորձագետների խումբը, հետևյալ կազմով.

- | | | |
|----|-------------------|----------------------------------|
| 1. | Բրյուս Տասկեր | գլխավոր մասնագետ-
վերլուծաբան |
| 2. | Նիկոլայ Պետրոսյան | փորձագետ |
| 3. | Սերգեյ Մուրադյան | փորձագետ |
| 4. | Աննա Գրիգորյան | գործավար |

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի անկախության հռչակումից հետո առաջին տարիների ընթացքում ստացվող միջազգային աջակցության մեջ մեծ էր մարդասիրական օգնությունների տեսակարար կշիռը, սակայն տարիների ընթացքում վարկերի և դրամաշնորհների մասը աճեց: Դրամաշնորհները հիմնականում տրամադրվում են փոքր և միջին բիզնեսի զարգացման համար, գիտությանը, կոմունալ ոլորտին, ինչպես նաև կառավարության առանձին ծրագրերի ֆինանսավորման համար:

1991 թ.-ից Հայաստանում իրականացվել են հարյուրավոր մարդասիրական և դրամաշնորհային ծրագրեր, ինչպես նաև մի շարք խոշոր վարկային ծրագրեր:


1991թ.-ից առ այսօր աջակցության երեք ուղղություններով Հայաստանը ստացել է մոտ 3 միլիարդ ԱՄՆ դոլար:

Ամերիկայի Միացյալ Նահանգները հանդիսանում են ամենախոշոր դոնորը և տրամադրել են մոտ 1.5 միլիարդ ԱՄՆ դոլարին համարժեք աջակցություն՝ առաջին տարիներին մարդասիրական օգնության, իսկ այնուհետև՝ դրամաշնորհների տեսքով: ԱՄՆ-ի կողմից տրամադրվող դրամաշնորհները ուղղվում էին փոքր և միջին բիզնեսի զարգացմանը, սակայն վերջին շրջանում ավելի մեծ տեղ է տրվում սոցիալական խնդիրներին:

Հայաստանի Հանրապետության խոշոր վարկատու է հանդիսանում Համաշխարհային բանկի խումբը, որի մեջ մտնում են Միջազգային Զարգացման Ընկերակցությունը (IDA), Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկը (IBRD) և Միջազգային Ֆինանսական Կորպորացիան (IFC):

Միջազգային Ջարգացման Ընկերակցության և Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկի կողմից տրամադրված վարկերի ընդհանուր գումարը կազմում է 740 մլն ԱՄՆ դոլար, որից մոտ 600 մլն ԱՄՆ դոլարը արդեն փոխանցվել է Հայաստանին: Վարկային ծրագրերի շրջանակներում, համաձայն տարածված պրակտիկայի, Համաշխարհային Բանկը սովորաբար տրամադրում է նաև դրամաշնորհներ:

Հետևյալ գրաֆիկը ցույց է տալիս Համաշխարհային բանկի կողմից տրամադրված վարկերի բաշխումը ըստ տնտեսության ճյուղերի և ոլորտների:



(Տվյալների աղբյուր՝ Համաշխարհային Բանկի տվյալների բազա, 2003թ. դրությամբ):

Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող վարկերի պայմանները բավականին գրավիչ են և մեղմ, իսկ դրամաշնորհային բաղադրիչը գերազանցում է 30%:

Համաշխարհային բանկի խմբի մեջ մտնող Միջազգային ֆինանսական կորպորացիան Հայաստանի Հանրապետությանը տրամադրել է մոտ 20 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհ՝ փոքր և միջին բիզնեսի զարգացման համար: Բացի այդ Կորպորացիան դրամաշնորհներ է տրամադրել մասնավոր սեկտորին:

1992 թ. մայիսին Հայաստանի Հանրապետությունը դարձել է Միջազգային Արժույթային Հիմնադրամի անդամ և այդ

ծամանակահատվածում Հիմնադրամի կողմից ստացել մոտ 315 մլն ԱՄՆ դոլար՝ 4 ծրագրերի իրականացման համար:

Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկը (EBRD) տրամադրել է Հայաստանին ավելի քան 120 մլն Եվրո գումարի վարկեր, որոնցից 75 մլն Եվրոն (100 մլն ԱՄՆ դոլար) փոխառության տեսքով տրամադրված է ՀՀ Կառավարությանը:

Ավելի քան 500 միլիոն Եվրո, մոտ 650 մլն ԱՄՆ դոլար, ստացվել է Եվրոմիությունից, մեծամասամբ տեխնիկական աջակցության և դրամաշնորհների տեսքով, ինչպես նաև 120 մլն ԱՄՆ դոլար գումարի վարկեր:

Ճապոնիայի կառավարության կողմից տրամադրված վարկերի և դրամաշնորհների ընդհանուր գումարը կազմում է մոտ 30 մլն ԱՄՆ դոլար:

Ռուսաստանի Դաշնությունից ստացված նյութական արժեքները կազմել են 95 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար, որի մարումը արդեն տեղի է ունեցել:

Բացի այդ, Հայաստանը աջակցություն է ստանում խոշոր բարեգործական կազմակերպություններից և անհատ բարերարներից, ինչպիսիք են Քրք Քրքորյանը և «Լինսի» հիմնադրամը, որոնք կարևոր ծրագրերի իրականացման համար տրամադրել են 170 մլն. ԱՄՆ դոլար:

(Տվյալների աղբյուր՝ Համաշխարհային Բանկի և Միջազգային Արժույթային Հիմնադրամի տվյալների բազաներ, 2003թ. դրությամբ):

Ներկայումս գոյություն ունեն հարյուրավոր ոչ առևտրային կազմակերպություններ, որոնք մարդասիրական օգնության տեսքով տարեկան մի քանի միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ ապրանքներ և նյութեր են ներմուծում Հայաստան:

Հանձնաժողովի խնդիրն էր պարզել թե ինչ արդյունավետությամբ են իրականացվել վերոհիշյալ ծրագրերը: Դրա համար անհարաժեշտ էր առաջին հերթին պարզել թե.

- Ո՞վքեր են ծրագրերի ֆինանսավորողները:
- Ո՞վքեր են աջակցություն ստացողները:
- Ո՞վ է հաստատում ծրագրերը:
- Ո՞վ է վերահսկում ծրագրերը:
- Ո՞վ է իրականացնում ապրանքների բաշխումը կամ ծառայությունների մատուցումը:

Սովորաբար, այս հերթականությամբ կապակցված կազմակերպությունների շղթան մնում է անփոփոխ և սկսվում է Դոնորից, որի դերում, վարկերի դեպքում հանդես են գալիս միջազգային ֆինանսական հաստատությունների հայաստանյան գրասենյակները:

Մարդասիրական ծրագրերի դեպքում, գործընթացը սկսվում է տարբեր երկրների կամ կազմակերպությունների Հայաստանի Հանրապետությունում ներկայացուցչություններից, որոնցից առավել ակտիվ է ԱՄՆ դեսպանությունը:

Մարդասիրական ծրագրերը սովորաբար իրականացվում են դոնորի կողմից կամ նրա նշանակված Կատարողական գործակալության կողմից:

Անկախության տարիների ընթացքում հարյուրավոր ոչ առևտրային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են հազարավոր մարդասիրական ծրագրեր:

Դրամաշնորհային ծրագրերի նախաձեռնողներ կարող են հանդիսանալ ինչպես պետությունների ներկայացուցչությունները, այնպես էլ միջազգային կազմակերպությունները:

Բոլոր դեպքերում, ծրագրերը հաստատվում է ՀՀ Կառավարության կողմից:

ՀՀ Կառավարությունը ստեղծել է զանազան ծրագրերի համադրան և վերահսկողական ծավալուն ապարատ՝ նախարարությունների համապատասխան վարչությունների, առանձին կոմիտեների կամ ԾԻԳ-երի տեսքով: Վերջիններիս

աշխատանքի արդյունավետության ուսումնասիրությունը նույնպես մեր հանձնաժողովի խնդիրն է:

Սա է օգնության կամ վարկային ծրագրերի ընդհանուր համառոտ նկարագրությունը: Դրա հետ կապված տարաբնույթ և ծավալուն տեղեկատվությունը մինչ օրս ի մի բերված չէ, ինչը բավականին դժվարացնում է մեր հանձնաժողովի աշխատանքը:



Հաշվի առնելով ուսումնասիրվող նյութի հսկայական ծավալը, ինչպես նաև տնտեսության առանձին ոլորտներում, թե վարկային, թե դրամաշնորհային ծրագրերի փոխլրացնող բնույթը, հանձնաժողովը որոշեց առանձին ոլորտներն ուսումնասիրող ենթահանձնախմբեր ստեղծել: Նախնական բաժանման պատկերը հետևյալն է.

1. Խմելու ջրի և ոռոգման ջրի հետ կապված ծրագրեր պատասխանատուներ՝ Վահան Հովհաննիսյան, Մեխակ Մխիտարյան
2. Էներգետիկ համակարգ պատասխանատուներ՝ Գ. Մելիքյան, Հ. Ավետիսյան, Ա. Սադոյան, Վ. Բադալյան
3. Դատաիրավական համակարգ պատասխանատուներ՝ Վ. Բադալյան, Ս. Նիկոյան
4. Լինսի հիմնադրամի ծրագրեր պատասխանատուներ՝ Ս. Նիկոյան. Հ. Հակոբյան

ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱ

Հանձնաժողովի գործունեության հենց սկզբից նկատելի դարձավ աշխտանաքային նոր ուղղություն մշակելու անհրաժեշտությունը: Ուսումնասիրման նյութի հսկայական ծավալը, տեղեկությունների անկատարությունը և համակարգված տեղեկատվական բազայի բացակայությունը հանդիսացան լրջագույն խոչընդոտ հանձնաժողովի

աշխատանքի համար: Անհրաժեշտ նկատվեց ընդհանուր տեղեկատվական բազայի ստեղծումը: Մեր տեղեկությունների համաձայն՝ անցյալում նման փորձեր Կառավարության կողմից արվել են (ի դեպ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում), սակայն արդյունք բավարար և ամբողջական համարել չի կարելի: Հանձնաժողովը ձեռնամուխ եղավ համակարգչային տվյալների բազա ստեղծելուն, որի միջոցով հնարավոր կլինի տեղեկություններ ստանալ բոլոր վարկերի, դրամանորհների և մարդասիրական օգնությունների ծրագրերի մասին: Ներկայացված մի քանի գռաֆիկական պատկերները ներկայացնում են այդ տեղեկությունների մատչելիությունը մշակվող ծրագրի միջոցով:



- Կատեգորիաներ - Ծրագրերի խմբեր

← ԵՏ ENGLISH ՏՈՒՆ →

Կատեգորիաներ - Ծրագրերի խմբեր

Վարկեր	Դրամաշնորհներ	Մարդասիրական օգն.
Էներգետիկա	ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐԸ	Տեղական կառավարում
Գյուղատնտեսություն		Պաշտպանություն
Առողջապահություն		Սոցիալական ապահովություն
Արդարադատություն		Քաղաքաշինություն
Առևտուր և տնտ. զարգացում		Մշակույթ
Կրթություն և գիտություն		Բնապահպանություն

- Դոնոր կազմակերպություններ

← ԵՏ ENGLISH ՏՈՒՆ →

Բոլոր կատեգորիաներ - Դոնոր կազմակերպություններ


Վարկեր	Դրամաշնորհներ	Մարդասիրական օգն.
Փնտրել	Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակ	Search
Այբբենական կարգ	Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Կ Զ Դ Զ Վ Յ Զ Ն Ը Ո Գ Դ Ո Ս Կ Տ Թ Յ Ո Թ Զ	
Անվանում	Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակ Համաշխարհային ուսուցում ՀԿ հզորացման ծրագիր Հայ օգնության ֆոնդ (ՀՕՖ) Հայկական բարեգործական ընդհանուր միություն (Հ ՄԱԿ-ի Ջարգացման Ծրագիր Միջազգային օգնություն և զարգացում	
↓ ՄԱՆՐԱՄԱՍՆ	← ՆԱԽՈՐԴ	→ ՀԱՋՈՐԴ

Տեղեկություններ կազմակերպության մասին

← ԵՏ ENGLISH ՏՈՒՆ →

Դոնոր կազմակերպություններ

Կազմակերպության կոդային համարը		ՎՊՄՕ	ԴԿ	0017		
Անվանում						
ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն (USAID)						
Քաղաք		Երևան		Ինդեքս		375019
Փողոց		Բաղրամյան պող.		Հենք		18
Վճ. / Ճարս		Կոդ	374-1	Վճ.	529975	Ճարս
Կոնտակտային անձ		Ազգանուն		Անուն		Տաթևակ
		Պրն. Սիմոնյան		Կիթ		
Պաշտոն						
Տնօրեն						
Էլ. փոստ						
ksimmons@usaid.gov						
↓		↓				
ԿԱՌՈՒՑՎԱԾԸ		ԾՐԱԳՐԵՐ				



Ինֆորմացիան ներանցվում է հայերեն և անգլերեն լեզուներով և օգտագործողը կարող է ընտրել երկու լեզուներից մեկը կամ փոխել այն ցանկացած ժամանակ: Լեզուն բացելուց հետո բացվում է երկու պատուհան, որոնք տեղեկություն են պարունակում կազմակերպությունների և ծրագրերի մասին: Նրանց մեջ ներկայացված են չորս խումբ՝ «Վարկեր», «Դրամաշնորհներ», «Մարդասիրական օգնություն» և «Բոլոր խմբեր», որոնց մեջ մտնում է «Գլխավոր խումբ» և «Երկրորդական խումբ» ենթավեռնագրերը:

«Կազմակերպություններ» և «Ծրագրեր» խմբերը ունեն նույն հնարավորությունները բացելու ցանկացած ենթավեռնագիր:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Առանձնահատուկ դժվարություն է ներկայացնում մարդասիրական օգնությունների արդյունավետության ուսումնասիրությունը: Դրանց հոսքը դեպի Հայաստան սկսվեց 1988թ.-ի ավերիչ երկրաշարժից հետո և տարբեր ինտենսիվությամբ շարունակվում է մինչ օրս:

Հանձնաժողովը հանդիպել է տարբեր ժամանակներում մարդասիրական օգնությունները կարգավորող մարմինների ղեկավարների հետ: Այդպիսի մարմին առաջին անգամ ստեղծվել է 1993թ. –ին ՀՀ նախագահի հրամանագրով: Դա այն

Ժամանակ կոչվում էր ՀՀ կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողով /այժմ այն վերանվանվել է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով/:

Հանձնաժողովը ղեկավարել են.

1. Ռաֆայել Բագոյանը (1993-97թթ.)
2. Հրանուշ Հակոբյանը (1997թ.)
3. Արա Ասլիկյանը (1998-99թթ.)
4. Գագիկ Մարտիրոսյանը (1999-2001թթ.)
5. Վլադիմիր Մովսիսյանը (2001 թ. մինչ օրս)

Մինչև 1993թ. /այսինքն մինչև հանձնաժողովի ստեղծումը/ մարդասիրական օգնությունների կարգավորման խնդիրը դրված էր կառավարության պետական նախարար Գագիկ Շահբազյանի վրա:

90-ական թվականների սկզբի փոթորկալից ժամանակներից շատ քիչ տվյալներ են պահպանվել ամբողջական վերլուծություն կատարելու համար սակայն ակնհայտ է , որ հենց այդ տարիներին Հայաստան բերված մարդասիրական օգնության բաշխման մեջ տեղի ունեցած լուրջ թերությունները հնարավորություն են տվել մեծ չափով չարաշահումների:

Հարկ է նշել, որ 1993թ.-ից մինչև 1998թ.-ն հանձնաժողովը չի ունեցել կանոնակարգ:Այն ստեղծվել է միայն 1998թ.-ին Հրանուշ Հակոբյանի նախաձեռնությամբ:

ԲԾՀ հանձնաժողովը մինչև 1998թ.-ն ղեկավարած բոլոր պաշտոնյաների պնդմամբ փաստաթղթային արխիվը պատշաճ կերպով կազմվել և փոխանցվել է հերթականությամբ: Սակայն ինչպես վկայում է մեզ տրամադրված պաշտոնական տեղեկանքը հանձնաժողովի տրամադրության տակ են գտնվում 1998թ. հունիս ամսից մինչ այսօր հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և աշխատանքների հետ առնչվող բոլոր փաստաթղթերը: Արխիվում կան նաև ավելի վաղ ժամանակվա առանձին փաստաթղթեր հանձնաժողովի գործունեության մասին: Արխիվ փաստորեն չկա: Հարկ է սակայն նշել, որ 1998թ.-

ին նախորդող ժամանակահատվածին նախորդող
փաստաթղթերի որոնումը մենք դեռ չարունակում ենք:

Ներկայումս ՀՀԿԲԾՀՀ կազմված է 27 անդամներից և ունի
հետևյալ գործառույթները.

1. Ծրագիրը բարեգործական որակելը
2. Բարեգործական ծրագրերի հետ անմիջականորեն
կապված և դրանց համար զգալի նշանակություն ունեցող
ապրանքների և ծառայությունների՝ հարակից գործարքների
շրջանակի ճշտումը
3. Բարեգործական ծրագրերի վարչական ռեգիստր վարելը
4. Բարեգործության հրապարակայնությունն ապահովելը

Բարեգործը՝ արտերկրի ֆիզիկական անձ կամ
իրավաբանական անձ է, որը ըստ օրենքի, ազատ է այս կամ
այն ծրագրի ընտրության մեջ: Ծրագրի հայտը ներկայացվում է
հանձնաժողով, որը այն պարտադիր ուղարկում է ՀՀ
Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ
արդարադատության նախարարություն, ՀՀ կառավարության
առընթեր հարկային և մաքսային ծառայություններ
եզրակացություն ստանալու համար: Նույն նպատակով ծրագրի
հայտը նաև ուղարկվում է տվյալ ծրագրի հետ առնչվող
նախարարություններ:

Այս տեսանկյունից հանձնաժողովի մասնագետների կողմից
նախնական ուսումնասիրության է ենթարկվել ԲԾՀՀ-ի 2003թ.
գործունեության համապատասխանությունը սահմանված
կարգին:

2003թ. ՀՀ կառավարության ԲԾՀ հանձնաժողովի կողմից
ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգը
հիմնականում ընթացել է սահմանված կարգով/չնչին
շեղումներով/:

Խնդիրը կայանում է նրանում, որ հաջորդ փուլում, այսինքն
ծրագրերի իրագործման ընթացքում չի իրականացվում
պատշաճ հսկողություն պետական մարմինների կողմից,
որովհետև չկա դրա հստակ մեխանիզմը, իրավական ակտերի

անկատարության պատճառով: Այսպես համաձայն «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի վերահսկողությունը իրականացնում է լիազորված մարմինը: Համաձայն 2003թ. հունվարի 16-ի թիվ 66 ՀՀ Կառավարության որոշման լիազորված մարմին է ճանաչվել ԲԾՀՀ -ն, իսկ համաձայն ՀՀ Կառավարության «Բարեգործական ծրագրերը բարեգործական որոկելու և գրանցելու մասին» կարգի հանձնաժողովը ծրագրի իրականացման ընթացքի և արդյունքների նկատմամբ վերահսկողություն է իրականացնում հետևյալ կերպ՝

ա) ծրագրի կատարման արդյունքների հանձնման-ընդունման միջոցով, եթե նման կարգ սահմանված է ծրագրով կամ ծրագիրը բարեգործական որոկելու մասին որոշմամբ: Իրականության մեջ նման կարգ ծրագրերով չի նախատեսվում և սահմանված չի լինում: Ավելին, անգամ նման գրառումների առկայության դեպքում նրանք չեն կարող ծառայել լուրջ հետազոտության հիմք, քանի որ կազմվելու են շահագրգիռ անձանց և կազմակերպությունների կողմից:

բ) ծրագրի իրականացման արդյունքների նկատմամբ վերահսկողություն իրականացնող անձի միջոցով, եթե ծրագրով կամ ծրագիրը բարեգործական որոկելու մասին որոշմամբ նշանակված է նման անձ: Սովորաբար նման անձ ծրագրերով նախատեսված չի լինում և չի նշանակվում:

գ) ծրագիրն իրականացնողի, այլ շահագրգիռ կողմերի սեփական նախաձեռնությամբ կամ «Բարեգործական ծրագրերը բարեգործական որոկելու և գրանցելու» կարգին համապատասխան հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի միջոցով, ինչպես նաև բարեգործական աջակցություն ստացողների հարցման արդյունքում ձեռք բերված տվյալների ու «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կազմակերպություններում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքին համապատասխան կատարված ստուգումների արդյունքների ուսումնասիրության միջոցով: Նկատելի է, որ նույնիսկ այս տարբերակի իրագործման դեպքում բարեգործական ծրագրերն իրականացնող կազմակերպություններն իրենց հաշվետվությունները պարտավոր չեն ներկայացնել օրենքով

ստուգում կատարելու իրավասությամբ օժտված
կազմակերպություններին:

Այս ամենը վկայում է, որ բարեգործական և մարդասիրական
ծրագրերի իրականացման վերահսկողությունը ներկայումս
գուրկ է ռեալ մեխանիզմներից:

Վերջին ժամանակներում նկատելի է դարձել բարեգործական
ծրագրերում տարբեր կրոնական կազմակերպությունների
ընդգրկվածության աճը: Սա բազմիցս մամուլի կողմից դարձվել
է հասարակական ուշադրության առարկա: Սա է պատճառը
ինչու ՎԴՄՕ հանձնաժողովը փորձնական կարգով
անդրադարձել է այդպիսի ծրագրերից մեկին: Մեր
ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ԱՄՆ-ի «Վերջին
օրերի սրբերի բարեգործություններ» կորպորացիայի
հայաստանյան ներկայացուցչության հասցեով ստացված
բեռների բաշխման վերաբերյալ ԲԾՀ հանձնաժողով
ներկայացված տեղեկանքը պարունակում է իրականությանը
չհամապատասխանող տվյալներ: Պարզ լեզվով ասած՝ կեղծիք:
Մեր մասնագետներն այս փաստի վրա հրավիրեցին ԲԾՀ
հանձնաժողովի ուշադրությունը, որից հետո նամակ ուղղվեց
Երևանի քաղաքապետարան: Պատասխանը հաստատում է, որ
բեռների բաշխման ցանկում իրոք առկա են անճշտություններ:
Գործին ընթացք տրվեց և ՀՀ Վարչապետին ուղղված
ֆինանսների նախարարի 2004 թ. մարտի 12-ի թիվ 3/8-01-138-
2601 գրության հիման վրա, վարչապետի մարտի 18-ի թիվ 034-
1488 հանձնարարականով ԲԾՀ հանձնաժողովի
աշխատակազմում ստեղծվել է աշխատանքային խումբ ՀՀ
ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության պետական
բյուջեի նկատմամբ պարտավորությունների կատարման
վարչության պետ Վ. Զիլավյանի մասնակցությամբ: Արդյունքում
Երևանի թիվ 8 (Պուշկինի անվան) դպրոցից, Արաբկիր
համայնքի թիվ 16 մանկապարտեզից և «ԱՌԴԱ»
բարեգործական հիմնարկից ստացված գրությունների հիման
վրա հաստատվեց անճշտությունների փաստը:

Սա մենք իրավունք ունենք մեր հանձնաժողովի հաջողություն,
սակայն այս օրինակը բերեցինք միայն հաստատելու համար

մեր այն եզրակացությունը, որ բարեգործական ծրագրերի իրականացման ռեալ մեխանիզմները շատ թերի են:

ՎԴՄՕ հանձնաժողովը, ինչպես և մեր «մայր կազմակերպությունը»՝ խորհրդարանը, իրավապահ կամ ֆիսկալային մարմին չեն, այսինքն՝ մեր հետազոտությունները միտված են քաղաքական արդյունք կամ հետևանք առաջացնելու: Ուստի, կարևոր է նաև պարզել թե վարկային, դրամաշնորհային և մարդասիրական ծրագրերը ինչպիսի ազդեցություն են թողել կամ թողնում ՀՀ տնտեսական, սոցիալական և բարոյական վիճակի վրա: Վերջին տարիներին հասարակության մեջ սուր խնդիրներ առաջացնող հարցերից մեկն է ջրամատակարարման հարցը, հատկապես, Երևան քաղաքի խմելու ջրի մատակարարումը: Դա է պատճառը, որ հասարակական հնչեղություն ունեցող այս հարցը հենց սկզբից դարձավ հանձնաժողովի ուսումնասիրության առարկա: Դա բացատրվում է մի շարք պատճառներով:

1. Բնակչության աճող դժգոհությունը՝ կապված ջրամատակարարման ցածր որակի հետ:
2. ՀԶԾ-ը մոտենում է ավարտին
3. Նախապատրաստվել է և Համաշխարհային բանկի հաստատմանն է սպասում ևս 20 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ, որը նույնպես ուղղվելու է ջրային տնտեսության բարեկարգմանը:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԶԾ)

ՀԶԾ-ը վարկային ծրագիր է, որը ֆինանսավորվել է Համաշխարհային Բանկի խմբի մեջ մտնող Միջազգային Զարգացման Ընկերակցության (IDA) կողմից, և նպատակ է ունեցել բարելավել Երևան քաղաքի ջրամատակարարման համակարգը:

Նախագծի նպատակներն են՝

1. Կատարել կարճաժամկետ բարելավումներ ջրամատակարարման համակարգում,

- բարձրացնելով Երևանի խմելու ջրի մատակարարման մակարդակը:
2. Բարձրացնել ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայությունների արդյունավետության, կառավարելիության և շահագործման ցուցանիշները:
 3. Ստեղծել բարենպաստ և գրավիչ պայմաններ՝ տնտեսության այս ոլորտում մասնավոր ներդրումների կատարման համար:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 35.5 մլն ԱՄՆ դոլար: 30 մլն ԱՄՆ դոլար գումարը տրամադրվել է Համաշխարհային բանկի կողմից, ևս 5.5 մլն. ԱՄՆ դոլար հատկացնում է ՀՀ Կառավարությունը՝ համաֆինանսավորման կարգով:

Ուսումնասիրությունը սկսվեց ծրագրի վարչական առանձնահատկությունների պարզաբանումից.

- ա. Որ կազմակերպություններ են ներգրավվել ծրագրի իրականացման գործընթացին,
- բ. Ինչպիսի պատասխանատվություն են կրում կողմերը ծրագրի վերջնական արդյունքների համար:

Ծրագրի իրականացմանը մասնակցող կազմակերպություններն են.

1. Համաշխարհային Բանկի խմբի մեջ մտնող Միջազգային Զարգացման Ընկերակցությունը
2. ՀՀ Կառավարությունը (ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, «Վարկառու» և Կառավարությանն առընթեր Ջրային տնտեսության Պետական Կոմիտե)
3. «Երևանի Ջրմուղ-Կոյուղի» ՓԲԸ-ն (ԵԶԿՓԲԸ), որը ստացել է վարկային միջոցները (Ենթավարկառու):
4. Ջրամատակարարման ոլորտում մասնագիտացված Օտարերկրյա ընկերությունը (Օպերատոր), որը իրականացնում է նախագիծը՝ միջազգային ստանդարտներին համապատասխան:

5. Ծրագրի ղեկավարման գրասենյակը, որը ստեղծվել է հատուկ Համայնքային զարգացման ծրագիրը կոորդինացնելու նպատակով:

Ծրագրի սկզբնական փուլում ԵԶԿՓԸ գտնվում էր Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ, իսկ այնուհետև անցել է ՀՀ Կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի ենթակայության տակ:

ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համաշխարհային բանկը տրամադրում է ծրագրի վարկային միջոցները և ներկայացնում իր կողմից մշակված ծրագրի իրականացման ընթացակարգերի կանոնները: ՀԲ-ը ստանում է տեղեկություններ ծրագրում հնարավոր փոփոխությունների վերաբերյալ և հաստատում է այդ փոփոխությունները:

ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը վերահսկում է ծրագրի ֆինանսական օպերացիաները, իսկ ՀՀ Կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեն՝ ծրագրի տեխնիկական կողմը:

Օպերատորը պատասխանատու է Երևանի ջրամատակարարման համակարգի շահագործման հետ կապված բոլոր աշխատանքների իրագործման համար, որոնք կատարվում են «Ընթացիկ ներդրումների հիմնադրամ» բաղադրիչի շրջանակներում:

ՀԶԾՂԳ-ը պատասխանատու է Համայնքային զարգացման ծրագրի շրջանակներում իրականացվող գործառնությունների կոորդինացման և վերահսկման համար:

Աշխատանքի ընթացքում հանձնաժողովի մասնագետները ուսումնասիրել են ծրագրի հետ կապված բազմաթիվ պայմանագրային փաստաթղթեր և դրանցում հետազայում կատարված փոփոխությունները, ինչպես նաև ՀՀ Կառավարության որոշումները և ՀԶԾՂԳ-ի և Օպերատորի հաշվետվությունները:

Այս փաստաթուղթը սահմանազատում է Օպերատորի (իտալական «Էյ Յուբիլիթի» ընկերություն) և պատվիրատուի (ՀՀ Կառավարությանն առընթեր Ջրային տնտեսության Պետական կոմիտե) պարտականությունները՝ կապված Համայնքային Ջարգացման Ծրագրի իրականացման հետ և պարունակում է մոտ ՀԱՐՅՈՒՐ առաջադրանքներ, որոնք պետք է կատարվեն ծրագրի ընթացքում Օպերատորի կողմից:

Պայմանագրում հստակեցված են աշխատանքային նպատակներն ու խնդիրները: Վարկային Համաձայնագիրը նախատեսում է Օպերատոր վարձել 5 մլն դոլարով:

Այն դեպքում, եթե ծրագիրը իրականացվում է գերազանց մակարդակով, Օպերատորը, բացի ֆիքսված տարեկան վճարից, որը կազմում է մոտ 730 000 ԱՄՆ դոլար, ստանում է նաև խրախուսիչ պարգևատրում, որի առավելագույն չափը կարող է կազմել տարեկան 375 000 ԱՄՆ դոլար:

Օպերատորի աշխատանքի արդյունքների գնահատման համակարգը բավականին պարզ է և նման է դպրոցում ընդունված գնահատականների սանդղակին: 5 գնահատականը համապատասխանում է «գերազանց» արդյունքին, 4՝ «շատ լավ», 3՝ «լավ», 2՝ «բավարար», 1՝ «վատ»:

Խրախուսիչ պարգևավճարը առավելագույն, այսինքն՝ 375000 ԱՄՆ դոլարի չափով, ստանալու համար, առավել կարևոր գործառնությունների կատարողական ցուցանիշներով Օպերատորը պետք է ստանա «գերազանց» գնահատական: Եթե առանցքային ցուցանիշներից որևէ մեկի կատարողականը ցածր է «գերազանցից», ապա Օպերատորի պարգևատրման չափը համամասնորեն կրճատվում է: Պայմանագրի սկզբնական պայմանների համաձայն՝ կատարողական ցուցանիշներից որևէ մեկի մասով Օպերատորի «Վատ»-ից ցածր գնահատական ստանալու դեպքում, նա ընդհանրապես զրկվում է տարեկան խրախուսիչ պարգևատրումից:

Այսպիսով, պետք է նշել, որ կատարողական ցուցանիշների մշակված համակարգը պարտադրում էր Օպերատորին

կատարել նախատեսված աշխատանքները պատշաճ
ջանասիրությամբ և ապահովել գերազանց արդյունքներ, ինչ
թույլ կտար բարելավել Երևան քաղաքի ջրամատակարարումը
և ապահովել բնակչության կողմից սպառվող ջրի բարձր որակը:

Ծրագրի կարևորագույն խնդիրներից է նաև ջրի ինքնարժեքի
նվազեցումը՝ էլեկտրաէներգիայի ծախսումների կրճատման
միջոցով: Այս պայմաններով Օպերատորը պետք է իրագործեր
Երևանի ջրամատակարարման համակարգի վերանորոգումը և
բարելավումը: Իր առջև դրված խնդիրը հասկանալու համար
ներկայացնում ենք ծրագրի մեկնարկային փուլում:

ԵՐԵՎԱՆԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



Երևանի այս քարտեզը ցույց է տալիս, թե ինչպես է կատարվում խմելու ջրի մատակարարումը դեպի քաղաք:

Ջրի ծավալների մեծ մասը մատակարարվում է հյուսիսից, և քանի, որ հյուսիսային շրջանները քաղաքից բարձր են գտնվում, ջուրը մատակարարվում է ինքնահոսով:

Սակայն որոշակի ջրի ծավալներ մատակարարվում են հարավային աղբյուրներից, որոնք գտնվում են քաղաքի միջին մակերևույթից ցածր, հետևաբար ջուրը մղվում է պոմպերի միջոցով: Ջրամատակարարման այսպիսի համակարգը ավելի թանկ է, բացի այդ հնամաշ պոմպերը գտնվում են վթարային վիճակում:

Քաղաքի բոլոր թաղամասերում տեղակայված են լոկալ պոմպեր, որոնց միջոցով ջուրը մատակարարվում է բարձրահարկ շենքերի վերևի հարկերում բնակվող բնակիչներին:

Ջրամատակարարման համակարգի մեջ են մտնում նաև ջրամբարները, ֆիլտրները, խողովակները, տեխնիկական սպասարկման հանգույցները և լաբորատորիաները, ինչպես նաև կեղտաջրերի հեռացման համակարգերը: Բոլորն էլ ծայր աստիճան մաշված:

Այսպիսին է Երևանի ջրամատակարարման համակարգը, որը կառուցվել և ձևավորվել է մոտ 100 տարվա ընթացքում և ներկայումս հնամաշ է և գտնվում է վթարային վիճակում:

Խորհրդային Միության ժամանակաշրջանում էլեկտրաէներգիայի խնայողության խնդիր չկար և քաղաքի ջրամատակարարման ապահովումը համեմատաբար հեշտ խնդիր էր, թեև 70-ական թվականների վերջից արդեն առաջացան որոշ բարդություններ: Ներկայումս հոսանքի վրա գնացող ծախսերը կարևորագույն նշանակություն են ձեռք բերել ջրամատակարարման հարցում: Վերջին հանգամանքը հատուկ պարտավորություններ է դնում Օպերատորի վրա էլեկտրաէներգիայի խնայողության ապահովման իմաստով:

Այս նկարագրությունից պարզ է դառնում, թե ինչ բաղադրիչ մասերից պետք է բաղկացած լինեն ողջ ծրագիրը: Դրանք են.

1. Անհապաղ ներդրումների ծրագիր – 5.180 մլն. \$
Անհետաձգելի ներդրումներ՝ Երևանի շրջաններից որևէ մեկի ջրամատակարարման համակարգի բարելավման, և այն շուրջօրյա դարձնելու նպատակով:
2. Կառավարման պայմանագիր - 5 մլն. \$
Ոլորտում մասնավոր կառավարչի ներգրավում՝ 4-ամյա կառավարման պայմանագրի հիման վրա:
3. Ընթացիկ ներդրումների հիմնադրամ - 10 մլն. \$
Համակարգի շահագործման և տեխնիկական սպասարկման բարելավում, այդ թվում նյութերի, խողովակների, սարքավորումների ձեռք բերում պոմպերի,

ջրաչափման և վերահսկողության համակարգերի համար:

4. Կապիտալ ներդրումների հիմնադրամ - 10 մլն. \$
Ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման համակարգերի վերակառուցում:
5. Բնակարանային շինարարություն – 1.552 մլն. \$
Հետազոտական աշխատանքներ՝ ուղղված բնակարանային շինարարության ազգային ծրագրի մշակմանը և աղետի գոտում բնակարանային համալիրի վերականգնմանը:
6. Տեխնիկական օժանդակության ծրագիր – 3.830 մլն \$
Ծրագրի ղեկավարման մարմնի (ԾՂԳ) գործունեության, կապալառուների աշխատանքի վերահսկողության և աուդիտի ծախսերի, ինչպես նաև Հայաստանի ջրային տնտեսության բարելավման համար նախատեսված գումարներ:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐՎԵՒՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Հենց սկզբից նշենք, որ կապիտալ ծախսերի համար նախատեսված գումարը երկար ժամանակ «մեռած կապիտալի» տեսքով մնալուց հետո, գրեթե ամբողջությամբ մտավ ընթացիկ ներդրումների հիմնադրամի մեջ: Այդ գումարից օգտագործվել են միայն 170 հազար \$-ը, որոնք իբր թե ծախսվել են նախագծային աշխատանքների համար: Սակայն եթե նույնիսկ գոյություն ունեն ինչ-որ նախագծեր, ապա գումարը միևնույն է չծառայեց իր նպատակին, որովհետև նախագծվածի կառուցումը հետաձգվեց անժամկետ:

Սկզբնական փուլում իրականացվել է ընդհանուր ծրագրի «Անհապաղ ներդրումներ» բաղադրիչը, որի արդյունքում պետք է բարելավվեր Դավթաշենի և Ֆիզիկայի ինստիտուտի թաղամասերի ջրամատակարարումը, ապահովվելով դրա անընդհատությունը: 2002 թ. նոյեմբերին ստորագրվել է աշխատանքների ընդունման ակտ, համաձայն որի

թաղամասերի շուրջօրյա ջրամատակարարումը համարվել է ապահովված:

ՍՏՈՐԱԳՐՈՂ ԿՈՄՂԵՐԸ

1. Երևանի քաղաքապետարանի կոմունալ վարչության պետ, Լ. Ղազարյան
2. ՀՀԾՂԳ տնօրեն՝ Վ. Ավոյան
3. Դավթաշենի թաղապետ՝ Ս. Ղուկասյան
4. ԵԶԿԸ Արևմտյան մասնաճյուղի տնօրեն՝ Հ. Ղազարյան
5. «Էյ. Յուրիլիթի» ընկերության (Օպերատորի) լիազոր ներկայացուցիչ՝ Ռ. Վոլկլինգ

Ստուգելու համար այս հաստատումը հանձնաժողովը հասարակական կազմակերպության միջոցով կազմակերպել է հարցում, որի ամփոփաթերթիկը կցում ենք զեկույցին:

Հարցումը կատարվել է Դավթաշեն համայնքի բոլոր 4 թաղամասերում: Յուրաքանչյուր թաղամասում ուսումնասիրվել է 6 շենք, յուրաքանչյուր շենքում՝ 3-ական բնակարան՝ ստորին, միջին և վերին հարկերում: Ընդհանուր առմամբ 72 բնակարան:

1. Ջրաչափեր տեղադրվել են 99 տոկոս բնակարաններում:
2. Ջրաչափի տվյալներին վստահում են 43 տոկոսը, չեն վստահում՝ 27 տոկոսը, կարծիք չունեն՝ 30 տոկոսը: Վերջինների անտարբերությունը արդյունք է ոչ թե նյութապես ապահովված լինելու, այլ այն հանգամանքի, որ նրանք չեն էլ պատրաստվում վճարել:
3. Շուրջօրյա ջրամատակարարում ունեն շենքերի միայն առաջին հարկերը: Շենքերի միջին հարկերը ունեն 11-12 ժամյա ջրամատակարարում՝ 7-00 – 8-00-ից մինչև 23-00 - 24-00: Շենքերի վերին հարկերը ունեն 7-8 ժամ ջրամատակարարում:
4. Բնակչության մոտ 80 տոկոսին բավարարում է ջրամատակարարման տևողությունը (հաշվի առնելով այն հանգամանքը, որ մի քանի ամիս առաջ ջուր չեն ունեցել ընդհանրապես): Դավթաշեն համայնքի բնակչությունը դժգոհություն ունի՝ կապված ջրի որակի,

ջրաչափերի սխալ հաշվարկի և ջրի վարձի սպասվելիք բարձրացման կապակցությամբ:

Փաստորեն, անհետաձգելի ծրագրերից ամենակարևորը պատշաճ կերպով կատարված չէ:

Հարցմանը հետևած մոնիտորինգը ցույց տվեց, որ ջրի մատակարարումը կտրուկ կերպով լավացել է թաղամասի ուշադրության կենտրոնում հայտնվելուց հետո:

Անհապաղ ներդրումների ծրագրի շրջանակներում կատարվել են նաև Արզաքանի ջրամբարի վերակառուցման աշխատանքները:

«Ընթացիկ ներդրումներ» բաղադրիչը (10 մլն ԱՄՆ դոլար) ուղղված էր լուծելու կարևորագույն խնդիրներից մեկը՝ «Հոսակորուստների հայտնաբերման» ենթածրագրի իրականացումը, որի արդյունքում պետք է հայտնաբերվեին խողովակների առավել հնամաշ հատվածները, որոնք անհապաղ վերանորոգման կամ փոխարինման կարիք են զգում:

Սա աշխատանքների այն հատվածն է, որի պատշաճ իրականացման համար միջազգային հարուստ փորձ ունեցող մասնագետների ներգրավումը առավել կարևոր էր: Աշխատանքների նպատակն էր արևմտյան տեխնոլոգիաների կիրառման միջոցով ապահովել համակարգի մանրակրկիտ զննումը և փոխարինել առավել հնամաշ խողովակները, ինչպես նաև քարտեզագրել այն հատվածները, որոնց վերանորոգումը պետք է իրականացվեր ավելի ուշ:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ «Էյ Յութիլիթի»-ի հետ կնքված Կառավարման պայմանագրի համաձայն, վերջինս պետք է իր պարտավորությունների կատարման մեջ ներգրավեր առնվազն 16 օտարերկրյա մասնագետներ:

Մինչդեռ, մինչ օրս ծրագրի իրականացմանը մասնակցել են տարբեր ժամանակահատվածներում Հայաստան գործուղված

թվով մեկ տասնյակի չհասնող աշխատակիցներ, որոնցից զգալի մասը ներգրավված են եղել ադմինիստրատիվ ոլորտում: Համաձայն Կառավարման պայմանագրի աշխատանքային պլանի՝ հոսակորուստների հայտնաբերման ենթաօրագիրը պետք է կատարվեր հետևյալ գրաֆիկով՝

1-ին պայմանագային տարի (2000 թ.)՝ 500 կմ
2-րդ պայմանագային տարի (2001 թ.)՝ 750 կմ
3-րդ պայմանագային տարի (2002 թ.)՝ 250 կմ

(Կառավարման պայմանագիր, Հավելված 6, «Կատարողական ցուցանիշների մասին», ԾՀ 5.3.(1)(գ)):

Համաձայն Օպերատորի տարեկան հաշվետվությունների 1-ին պայմանագրային տարվա ընթացքում կատարվել է 510 կմ երկարությամբ խողովակների զննում, իսկ 2-րդ տարվա ընթացքում՝ 755 կմ:

(Օպերատորի 1-ին պայմանագրային տարվա հաշվետվություն, էջ 36, կետ 3.9.5; Օպերատորի 2-րդ պայմանագրային տարվա հաշվետվություն, էջ 37, կետ 3.9.5):

Առաջին հայացքից թվում է, թե Օպերատորը նույնիսկ գերակատարել էր պայմանագրային պահանջները և պետք է ստանար «գերազանց» գնահատական:

Սակայն անկախ տեխնիկական աուդիտոր՝ դանիական «Ռամբոլ» ընկերությունը, հոսակորուստների հայտնաբերման ընթացքում Օպերատորի կողմից կիրառված մեթոդները ընդունելի չի համարել:

Ինչպես նշվում է Օպերատորի տարեկան հաշվետվություններում, իբր թե «արևմտյան տեխնոլոգիաների» էությունը կայանում է նրանում, որ Օպերատորի աշխատակիցները պարզապես բացում էին հորերի խուփերը և նայում, արդյոք հանգույցում հոսակորուստ կա թե ոչ: Եթե հոսակորուստ չէր հայտնաբերվում, ապա համարվում էր, որ երկու զննված հորերի միջև ընկած հատվածը գտնվում է բարվոք վիճակում: Եվ միայն հորում ջրի հոսք հայտնաբերելու դեպքում, կատարվում էր գրառում հոսակորուստի մասին:

Այնուհետև, հետազոտված հորերի միջև ընկած ընդհանուր տարածությունը կազմում էր հոսակորուստների հայտնաբերելու նպատակով ուսումնասիրված խողովակների երկարության ցուցանիշը: Այդպես են գումարվել Օպերատորի հաշվետվության մեջ նշված և հայկական կազմակերպությունների կողմից լռությամբ ընդունված իբր թե զննված հարյուրավոր կիլոմետրերը: Դա է պատճառը, էե ինչու անկախ տեխնիկական աուդիտորը չի ընդունել աշխատանքի նման մեթոդը, 2-րդ պայմանագրային տարվա արդյունքներով «Հոսակորուստների հայտնաբերման» ենթաժողովի մասով Օպերատորին նշանակելով «զրո» գնահատական:

(ՀՀԾՂԳ-ի կողմից տրամադրված տեղեկանք):


Սրանից հետո Օպերատորը իր աշխատանքի մեթոդները վերանայելու և բարեփոխելու ոչ մի փորձ չի կատարել և ընդհանրապես դադարեցրել է աշխատանքները այդ ուղղությամբ, փոխարենը «ցուցանիշներ ապահովելու» այլ ձևեր որոնելով, ինչին մենք դեռ կանդրադառնանք: Բնական է, որ, չունենալով հոսակորուստների մասին լուրջ ուսումնասիրության վրա հիմնված որևէ տեղեկություն Օպերատորը չէր կարող իրականացնել խողովակների նորոգում կամ փոխարինում: Ինչը և չի արել:

Դիտելով հաջորդ գրաֆիկը, մենք կարող ենք տեսնել, թե ինչպիսի դրական ազդեցություն պետք է ունենաին կատարված ներդրումները ջրամատակարարման և կոյուղու համակարգերի վրա: Ըստ կառավարման պայմանագրի, Օպերատորի աշխատանքի արդյունքում վթարների քանակը ջրամատակարարման համակարգում պետք է կրճատվեր տարեկան 20%-ով, իսկ կոյուղու համակարգում՝ տարեկան 12-13%-ով:

(Կառավարման պայմանագիր, Հավելված 6, «Կատարողական ցուցանիշների մասին», ԾՀ 5.3.(1)(է):

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՅՈՒՂՈՒ ՋԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՎԹԱՐՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

ԻՐԱԿԱՆՈՒՄ




Առաջին գրաֆիկը արտացոլում է կոյուղու համակարգի նախատեսող բարելավումները: Բազիսային տարում արձանագրված 4610 վթարների քանակը պետք է աստիճանաբար կրճատվեր և 2004 թ-ին նվազեցվեր 50%-ով:

Սակայն, ինչպես տեսնում ենք գրաֆիկի վրա իրական տվյալները զգալիորեն տարբերվում են նախատեսվածից: Գրաֆիկը ցույց է տալիս պայմանագրային երեք տարիների ընթացքում կոյուղու համակարգում գրանցված վթարների քանակը: Ինչպես տեսնում ենք 3-րդ տարվա վերջում կոյուղու համակարգում տեղի ունեցած վթարների քանակը 36%-ով գերազանցում է բազիսային տարվա (մինչև կառավարման պայմանագրի կնքելը) ցուցանիշը, այսինքն՝ մոտ 3 անգամ գերազանցում է նախատեսված մակարդակը:

(Օպերատորի 1-ին պայմանագրային տարվա հաշվետվություն, էջ 35, կետ 3.9.3, աղյուսակ 3.9.2.; Օպերատորի 2-րդ պայմանագրային տարվա հաշվետվություն, էջ 36, կետ 3.9.3, աղյուսակ 3.9.2.; Օպերատորի 3-րդ պայմանագրային տարվա հաշվետվություն, էջ 30, կետ 3.9.3, աղյուսակ 3.9.3.):

ԵՐԵՎԱՆԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՎԹԱՐՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

ԻՐԱՎԱՆՈՒՄ



Երկրորդ գրաֆիկը ցույց է տալիս թե ինչ չափով պետք է կրճատվեր խմելու ջրի մատակարարման համակարգում վթարների քանակությունը: Ինչպես տեսնում եք, յուրաքանչյուր տարվա ընթացքում նախատեսվում էր 20%-ով կրճատել բազիսային տարվա ցուցանիշը, որը կազմում էր 1108 վթար:

Պայմանագրային երրորդ տարվա արդյունքներով իրավիճակը վատթարացել է այնքան, որ վթարների թիվը աճել է բազիսայինի համեմատությամբ 100%-ով, այսինքն՝ 2003 թ.-ին վթարների թիվը եղել է նախատեսվածից մոտ 5 անգամ ավել:

(Օպերատորի 1-ին պայմանագրային տարվա հաշվետվություն, էջ 35, կետ 3.9.3, աղյուսակ 3.9.2.;
Օպերատորի 2-րդ պայմանագրային տարվա հաշվետվություն, էջ 36, կետ 3.9.3, աղյուսակ 3.9.2.;
Օպերատորի 3-րդ պայմանագրային տարվա հաշվետվություն, էջ 30, կետ 3.9.3, աղյուսակ 3.9.3.):

ՀՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՆԸՆԴՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ անդրադառնանք ծրագրի ևս մեկ կարևորագույն բաղադրիչի և տեսնենք, թե ինչպես է բարելավվել ջրի մատակարարումը սպառողներին:


Համաձայն նախագծի պայմանագրային պահանջի, 4-ամյա պայմանագրի ժամկետը լրանալու պահին (2004 թ. մայիս)

պետք է գրանցված լինի ջրի մատակարարման անընդհատության զգալի աճ: Ջրամատակարարման անընդհատությունը պետք է կազմի 75%: Հարկ է նշել, որ ըստ կառավարման պայմանագրի, ջրի մատակարարման անընդհատության 75% ցուցանիշը պետք է գործի Երևան քաղաքի բոլոր թաղամասերում, իսկ անընդհատության ցուցանիշը պետք է հաշվարկվի ամառվա ժամանակահատվածում, երբ ջրամատակարարման հարցում սովորաբար խնդիրներ են առաջանում:

(Կառավարման պայմանագիր, Հավելված 6, «Կատարողական ցուցանիշների մասին»):

Օպերատորի կողմից ներկայացված տարեկան հաշվետվություններում արձանագրված է բավականին լուրջ առաջընթաց ջրի մատակարարման անընդհատության ապահովման գործում:

Նշված է, որ 2002 թ. նոյեմբեր – 2003թ. ապրիլ ամիսների ընթացքում Երևան քաղաքի բաժանորդների ջրի մատակարարման միջին ցուցանիշը օրվա կրվածքով կազմել է 9.3 ժամ: Մի կողմ թողնելով, այն հանգամանքը, որ պայմանագիրը պարտադրում է Օպերատորին բոլոր նման ցուցանիշները հաշվարկել ամառվա ամիսներին, ասենք, որ առկա ինֆորմացիայի համաձայն, ջրամատակարարման տևողության իրական ցուցանիշները ցածր են Օպերատորի կողմից ներկայացված տվյալներից: Դա արդեն երևաց Դավթաշենում կատարված հարցման արդյունքում: Տարակարծություններից խուսափելու նպատակով հանձնաժողովով մասնագետները մանրամասնորեն ուսումնասիրեցին այս խնդիրը:



Փորձենք պարզաբանել, թե ինչպես է հաջողվել Օպերատորին արձանագրել ջրամատակարարման անընդհատության այսպիսի բարձր ցուցանիշներ:

Բարձուների վրա տեղակայված է Երևանը սնուցող բազմաթիվ ջրամբարներից մեկը: Ջուրը ինքնահոսով մատակարարվում է քաղաք: Բարձրահարկ շենքերի վերևի հարկերը ջրով ապահովելու համար քաղաքում տեղակայված են բազմաթիվ պոմպեր, որոնք պետք է մղեն ջուրը անհրաժեշտ բարձրության վրա:

Ջրամատակարարման համակարգը բաղկացած է բարձր և ցածր ճնշման խողովակներից:

Ցածր և բարձր ճնշման համակարգերի սահմանային կետ են հանդիսանում շենքերի շրջակայքում գտնվող լոկալ պոմպերը:

Քաղաքի դաշտային թաղամասերի շենքերի ներքևի հարկերի բնակիչները ստանում են որոշակի առավելություն, քանի որ իրենց հանգույցներին ջուրը հասնում է ինքնահոսով:


Բարձուների վրա գտնվող թաղամասերի և բարձրահարկ շենքերի վերևի հարկերում բնակվող բաժանորդների

ջրամատակարարման իրավիճակը զգալիորեն տարբերվում է: Այս բաժանորդների ջրամատակարարումը լիովին կախված է լոկալ պոմպերի աշխատանքից: Հենց այդ աշխատանքի բարելավումն էլ պետք է հիմք հանդիսանար Օպերատորի հաշվետվության բարձր ցուցանիշների համար: Սակայն արդյո՞ք դա այդպես է:

ՄԵԾ ՊՈՄՊԱԿԱՅԱՆՆԵՐ

Մենք ունենք ևս մեկ գրաֆիկ, որը ցույց է տալիս, թե ծրագրի ընթացքում ինչպիսի աշխատանքներ են կատարվել՝ ուղղված պոմպակայանների բարելավմանը:

Առաջին գրաֆիկը ցույց է տալիս ծրագրի իրականացման ընթացքում գրանցված խոշոր պոմպակայանների վթարների քանակը, թույլ տալով այն համադրել բազիսային տարվա ցուցանիշի հետ:




(Օպերատորի 1-ին պայմանագրային տարվա հաշվետվություն, էջ 34, կետ 3.9.1, աղյուսակ 3.9.1.;
Օպերատորի 2-րդ պայմանագրային տարվա հաշվետվություն, էջ 36, կետ 3.9.1, աղյուսակ 3.9.1.;
Օպերատորի 3-րդ պայմանագրային տարվա հաշվետվություն, էջ 29, կետ 3.9.1, աղյուսակ 3.9.1.):

Պետք է նշել, որ Կառավարման պայմանագրում նախատեսված է տարեկան 20%-ով կրճատել վթարների քանակը:

Սակայն ըստ Օպերատորի տարեկան հաշվետվությունների, պոմպերի վթարների քանակը շարունակում է աճել, 346-ից բազիսային տարում՝ մինչև 528 պայմանագրային 3-րդ տարում: 60% կրճատման փոխարեն մենք ստացել ենք 65%-ի չափով աճ:

ԼՈԿԱԼ ՊՈՄՊԵՐ

Գրանցելով խոշոր պոմպերի վթարների քանակության զգալի աճ, սակայն հաշվի առնելով ջրամատակարարման անընդհատության ցուցանիշի կարծեցյալ բարելավման պատրանքը, կարելի է ենթադրել, որ լոկալ պոմպերի մասով կատարվել են զգալի բարեփոխումներ:



(Օպերատորի 1-ին պայմանագրային տարվա հաշվետվություն, էջ 35, կետ 3.9.4, աղյուսակ 3.9.3.; Օպերատորի 2-րդ պայմանագրային տարվա հաշվետվություն, էջ 37, կետ 3.9.4, աղյուսակ 3.9.3.; Օպերատորի 3-րդ պայմանագրային տարվա հաշվետվություն, էջ 30, կետ 3.9.4, աղյուսակ 3.9.4.):


Երևանի ջրամատակարարման համակարգի մեջ են մտնում 795 լոկալ պոմպեր:

Ինչպես երևում է գրաֆիկի վրա, նախքան ծրագրի մեկնարկը քաղաքում գրանցվել է լոկալ պոմպերի 401 վթարի դեպք:

1-ին տարվա արդյունքներով այդ ցուցանիշը նվազեցվել է մինչև 383: Սակայն 2-րդ տարվա ընթացքում վթարների թիվը նորից աճել է՝ հասնելով մինչև 417: Իրավիճակը շարունակեց վատթարանալ նաև 3-րդ տարվա ընթացքում, որի արդյունքներով գրանցվել է 434 վթար: Այսպիսով, հերթական անգամ 60% բարելավման փոխարեն մենք ստանում ենք 8%-ի չափով վատթարացում:

Հաշվի առնելով վերը թվարկված փաստերը, կարելի է վերջապես հարցնել. ինչ՞ի հաշվին է աճել բաժանորդների ջրամատակարարման ցուցանիշը, որն, այսօր, ըստ Օպերատորի, կազմել է 9.3 ժամ:

Դա հասկանալու համար վերադառնանք ջրամատակարարման համակարգի պայմանական գրաֆիկական ներկայացմանը:



Համաձայն Կառավարման պայմանագրի, բաժանորդների կողմից ստացվող ջրի ծավալները հաշվարկելու նպատակով Օպերատորը պետք է տեղադրեր բարձակարգ արևմտյան տեխնոլոգիաներ:

Սակայն պարզվեց, որ Օպերատորը պարզապես հաշվարկում է ջրամբար մտնող և ջրամբարից դուրս եկող ջրի ծավալները: Տարբերությունը համարվում է Երևանի բաժանորդներին մատակարարված ջրի ծավալը: Այս մեթոդի կիրառմամբ են նրանք որոշում, թե Երևանի քանի բնակարան է ջուր ստացել և քանի ժամվա ընթացքում: Այս պարզունակ մեթոդը անթաքույց կերպով նկարագրված է Օպերատորի 2002 թ. հաշվետվության 33-րդ էջում և 2003 թ. 26-րդ էջում: Խոսքը տվյալ դեպքում գնում է Աերացիայի ջրամբարի մասին:

Արդեն հիշատակել ենք, որ Կառավարման պայմանագրի համաձայն, Օպերատորը պարտավորվել է իր առջև դրված տեխնիկական և կոմերցիոն բարդ խնդիրների լուծման մեջ ներգրավել բարձրակարգ մասնագետների:

Օպերատորի աշխատակազմի ցուցակը բավականին ծավալուն է այն լրիվ ընթերցելու համար, այդ պատճառով կխնդրեի ուշադրություն դարձնել էկրանին արտացոլվող տվյալներին:

ՕՊԵՐԱՏՈՐԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԱԶՄԸ

1. Ընդհանուր կառավարում
2. Հաշվապահություն
3. Բյուջեի կազմում
4. Ջրային ինժեներ
5. Կոյուղու ինժեներ
6. Համակարգչային ադմինիստրատոր
7. Տվյալների բազայի ղեկավարում
8. Աշխատանք բաժանողների հետ
9. Հասարակական կապեր
10. Տեխնիկական սպասարկման ղեկավարում
11. Ինժեներ-մեխանիկ
12. Ինժեներ-էլեկտրիկ
13. Ջրի որակի վերահսկում
14. Նյութերի վերահսկում
15. Կադրերի պատրաստում
16. Գրասենյակային ադմինիստրացիա


(Կառավարման պայմանագիր, Հավելված 7, «Կառավարման աշխատակազմի մասին»):

Սակայն հանձնաժողովին այդպես էլ չհաջողվեց պարզել, արդյոք այս բարձր որակավորումն ունեցող մասնագետները ընդգրկվել են ծրագրի իրականացմանը, թե ոչ, չնայած այդ

հարցով մենք գրավոր դիմել ենք «Էյ Յուրիլիթի» ընկերության լիազոր ներկայացուցիչ արն. Ռ. Վոլկլինգին:

Այնուամենայնիվ մեր ունեցած տեղեկությունները թույլ են տալիս կասկածել, որ այդ մասնագետների թիվը երբևէ գերազանցվել է մեկ տասնյակը, այն էլ ոչ միաժամանակ:

Մինչդեռ պարզվել է, որ «Էյ Յուրիլիթի»-ի վերահսկողությունը իրականացնող և ծրագիրը կոորդինացնող հաստատությունը՝ Համայնքային զարգացման ծրագրի ղեկավարման գրասենյակը, այնքան է ուռճացրել իր աշխատակազմը (23 աշխատող), և հետևաբար ծախսերը, որ նույնիսկ նկատողության է արժանացել Համաշխարհային Բանկի կողմից:



(Համայնքային զարգացման ծրագրի ղեկավարման գրասենյակի ՊՀ-ի կողմից տրամադրված տեղեկանք, առ 31.12.2003թ.):

Ինչպես երևում է այս գրաֆիկից ծրագրի կառավարման շուրջ ծաղկած բազմաթիվ գրասենյակների ծախսերը կլանել են վարկային միջոցների հսկայական մասնաբաժին: Այսինքն՝ Օպերատորի, ԾՂԳ-ի ուռճացված հաստիքները և բազմաթիվ խորհրդատվական ծառայությունները պահելու վրա գնացել է ավելի շատ գումար, քան շինարարական աշխատանքների:

Վերադառնալով Օպերատորին նշենք, որ մասնագետների և աշխատանքային արդյունքների բացակայությունը

այնուամենայնիվ չի խանգարել նրան օգտվել պարգևներ ստանալու գայթակղությունից:

ԽՐԱԽՈՒՄԻՉ ՊԱՐԳԵՎՆԵՐ

Ինչպես արդեն նշել ենք, գերազանց աշխատանք կատարելու դեպքում, Օպերատորը ստանում է ոչ միայն տարեկան հաստատագրված վճարը, այլ նաև խրախուսիչ պարգևավճար՝ առավելագույնը 375000 ԱՄՆ դոլարի չափով:

Սակայն այն ստանալու համար Օպերատորը պետք է գործեր համաձայն Կառավարման պայմանագրի կատարողական ցուցանիշների պահանջների:

Այժմ մենք գիտենք, որ Պայմանագրի պահանջների և ավարտին մոտեցող ծրագրի ներկայիս արդյունքների միջև կա զգալի տարբերություն:

Գաղտնիք չէ, որ առաջին պայմանագրային տարվա անմիաժամանակ արդյունքները ամփոփելուց հետո Երևանի քաղաքապետը առաջարկել էր չեղյալ համարել Կառավարման պայմանագիրը: Սակայն, ինչ-ինչ պատճառներով այն մնացել էր ուժի մեջ: Ավելին, 2001 թ. նոյեմբերին

Իտալական Օպերատորը,
Երևանի քաղաքապետը,
ՀՀ Կառավարությանն առընթեր ջրային տնտեսության
Պետական կոմիտեն,
ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի Նախարարությունը և
Համայնքային զարգացման ծրագրի ղեկավարման գրասենյակը

քննարկելով ստեղծված իրավիճակը և վերլուծելով
պայմանագրային 1-ին տարվա արդյունքները, որոշեցին ի
հօգուտ Օպերատորի, փոփոխություններ մտցնել Կառավարման
պայմանագրի մեջ:
Առաջին հերթին նվազեցվեցին Օպերատորի առջև դրվող
պահանջները:

Այս կապակցությամբ արժե հիշեցնել, որ «Էյ. Յուբիլիթի»-ն ընտրվել է որպես Օպերատոր 1999թ. հուլիսին և նույններից երկու փուլով կայացած մրցույթի միջոցով: Կարելի է ենթադրել, որ այդ որոշման պատճառ է հանդիսացել այն հանգամանքը, որ Օպերատորի առաջարկությունը գնային առումով եղել է շատ ավելի ցածր, քան իր մրցակիցներինը: Նա համաձայնվել է իրականացնել ծրագիրը 2 միլիոն դոլարով պակաս վարձատրությամբ, քան ֆրանսիական ընկերությունը և 1 միլիոնով պակաս, քան գերմանացիները: Ըստ ամենայնի, Օպերատորը գնային մրցույթում ի սկզբանե ներկայացրել է ոչ իրատեսական առաջարկ, որը սակայն ընդունվել է հայաստանյան պատասխանատուների կողմից:


Հարկ է նշել, որ պայմանագրային 1-ին տարվա արդյունքներով անկախ տեխնիկական աուդիտորը («Ռամբոլ» դանիական ընկերությունը) գրկել էր Օպերատորին խրախուսիչ պարզևատրումից, քանի որ 6 հիմնական կատարողական ցուցանիշներից 4-ի մասով Օպերատորը ստացել էր «Վատ-ից (1) ցածր գնահատական: Կառավարման պայմանագրի սկզբնական տարբերակի համաձայն, Օպերատորը գրկվում է խրախուսիչ պարզևավճարից, եթե պարզևատրման գծով պարտավորություններից որևէ մեկը արժանանար «Վատ»-ից ցածր գնահատականի:

Կառավարման պայմանագրի նոր տարբերակը նվազեցրել է Օպերատորի կատարողական չափանիշների ապահովման պահանջները:

Բացի այդ Կառավարման պայմանագրում կատարվեցին երկու փոփոխություններ՝ կապված տարեկան խրախուսիչ պարզևատրման հետ: Առաջին հերթին, այն գումարները, որոնք Օպերատորին չէր հաջողվել ստանալ նախորդ տարիների ընթացքում, որոշվեց փոխանցել հաջորդ տարիների հաշվի վրա: Եվ երկրորդը, «Վատ»-ից ցածր գնահատական ստանալու դեպքում Օպերատորի համար հնարավորություն ստեղծվեց այնուամենայնիվ արժանանալ պարզևատրման:

Այս հնարքների արդյունքում, Օպերատորի կատարված աշխատանքի ծավալն ու որակը դադարեց ազդել նրա

վարձատրման վրա: Ներկայացվող գրաֆիկը ցույց է տալիս իրական պատկերը:



(«Ռամբոլ» անկախ տեխնիկական աուդիտորի 2001, 2002, 2003 թթ. տարեկան հաշվետվություններ):

ՈՐԱԿԻ ԶԱՓԱՆԻՇՆԵՐ

Անկախ առաջադրանքի կատարման ծավալային ցուցանիշներից, Կառավարման պայմանագիրը հստակորեն մատնանշում է, որական ստանդարտները, որոնք պիտի համապատասխանեն աշխարհիում ընդունված որակյալ ինժեներական, հաշվապահական և խորհրդատվական չափանիշներին:

Ավելին, Համաշխարհային բանկը մատնանշում է մանրամասն ուղեցույցներ, որոնք իր աշխատանքի մեջ պարտավոր են կիրառել Օպերատորը և ԾՂԳ-ը և որոնք պետք է ապահովեն ծրագրում օգտագործվող բոլոր նյութերի պատշաճ որակ:

Ներկայացնում ենք մի շարք լուսանկարներ, որոնք պատկերում են Օպերատորի կողմից կիրառված «ստանդարտները»:

Առաջին լուսանկարի վրա պատկերված է Երևանի արվարձանում գտնվող ԵՋԿ-ի պահեստը, որտեղ կարող եք տեսնել ակնհայտորեն նոր խողովակների մեծ քանակություն: Մենք տեղեկություններ ունենք նաև, որ այդտեղ պահվում են ջրային տնտեսության հետ կապված բազմաթիվ այլ նյութեր և

սարքավորումներ (փականներ, պոմպեր, ճնշումը կարգավորող սարքեր և այլն):



Հաջորդ լուսանկարի վրա տեսնում եք, թե ինչ տեսք ունեն բոլորովին վերջերս ծրագրի շրջանակներում կատարված «նորոգումները»:



Այստեղ պատկերված է վերջերս, 2003 թ., տեղադրված լոկալ պոմպի համակարգ (Հանրապետության 76):



Հաջորդ լուսանկարը պատկերում է այն, ինչ պետք տեղադրվել, եթե Օպերատորը և նրան վերահսկող հայկական կազմակերպությունները իրոք մտահոգված լինեին միջազգային ստանդարտների պահպանությամբ:



ԶՐԱԶԱՓԵՐ

Մենք չենք կարող ասել, որ ծրագիրը լրիվ ձախողվել է:

Նախագծի մեկ բաղադրիչ կատարվել է՝ տասնյակ անգամ գերազանցելով նախատեսված ծավալները:

Ծրագիրը նախատեսում էր ջրաչափերի տեղադրման ենթածրագրի իրականացում:

Կառավարման պայմանագրով նախատեսված էր ընդամենը 20 000 փոքր տրամագծի ջրաչափերի գնում, որոնք տեղադրված պետք է լինեին առաջին երեք տարիների ընթացքում:

Սրանով նախատեսվում էր ստեղծել համագործակցություն
ԵԶԿՓԲԸ և Երևանում առաջացող համատիրությունների միջև:

Վարկային ծրագրի և Կառավարման պայմանագրի ողջ
տրամաբանությունը ենթադրում էր, որ առաջին հերթին պետք է
իրականացվեր Երևան քաղաքի ջրամատակարարման
համակարգի (ջրատարներ, ջրամբարներ, խողովակներ,
պոմպեր) վերանորոգումն ու բարելավումը, որին զուգահեռ
պետք է կատարելագործվեր չափման համակարգը և
վարձավճարների հավաքագրումը: Սակայն, ինչպես արդեն
նկատել տվեցինք դեռևս «հոսակորուստների հայտնաբերման»
փուլում նորոգման և վերակառուցման աշխատանքները
մղվեցին ետին պլան և ջրամատակարարման ցուցանիշների
բարելավմանը հասնելու հիմնական միջոց դարձավ
ջրաչափերի տեղադրումը: Վերջինս ավելի գրավիչ և
խրախուսելի դարձնելուն ծառայեց ՀՀ Կառավարության թիվ
650 որոշումը, որի համաձայն մինչև 2003թ. հունիս ջրաչափեր
տեղադրողները և ԵԶԿՓԲԸ-ի հետ պայմանագիր կնքողները
ազատվում էին ջրի վարձի կուտակված պարտքի 70 տոկոսից:

Համաձայն ԵԶԿՓԲԸ կողմից տրամադրված տեղեկատվության,
ընդհանուր առմամբ գնվել է 275,750 ջրաչափ, դրանցից 124
750-ը գնվել է Համայնքային Ջարգացման Ծրագրի
Ղեկավարման Գրասենյակի կողմից (այսինքն՝ վարկային
միջոցներով), ևս 150 000 հատ ջրաչափ գնել է ԵԶԿՓԲԸ:

Ջրաչափերի գնման մեծածախ գինը կազմել է 5-6 ԱՄՆ դոլար:
Համաձայն ԵԶԿՓԲԸ կողմից ստացված ինֆորմացիայի,
ջրաչափերը վաճառվել են բաժանորդներին մոտ 15 ԱՄՆ
դոլարին համարժեք գնով (8400 դրամ), բացի այդ բաժանորդը
իր հաշվին գնում է ջրաչափի տեղադրման համար անհրաժեշտ
համալրող սարքեր և վճարում տեղադրման աշխատանքների
համար:

Աուդիտորական վերջին զեկույցը, որը ներկայացվել մեր
մասնագետներին հաստատում է, որ ԵԶԿ-ին Երևանում գրանցել
է ընդհանուր առմամբ 289000 խմելու ջրի բաժանորդ: Որպես
կանոն սովորական երևանյան բնակարանում տեղադրվում են

երկու ջրաչափեր՝ խոհանոց և լոգարան մտնող խողովակների վրա: Այնպես որ բաժանորդների զգալի մասը պարտավորված է երկու ջրաչափ գնել: Եթե ենթադրենք անգամ, որ բնակարանների կեսը սահամափակվում է մեկ ջրաչափով, ապա ելնելով գրանցված բաժանորդների թվից կարելի է եզրակացնել, որ Երևանում բոլոր բաժանորդների կողմից ջրաչափ տեղադրելու դեպքում, դրանց թիվը կկազմի մոտ 430 հազար: Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր ջրաչափը վաճառվում է բնակչին 15 ԱՄՆ դոլարին համարժեք դրամով, ապա գործարքի ընդհանուր արժեքը հեռնկարում կազմելու է 6.5 մլն ԱՄՆ դոլարին մոտ գումար:

Մեր բազմաթիվ գրավոր դիմումները ԾՂԳ-ի և ԵԶԿ տնօրեններին այդ վաճառքներից առաջացող գումարների ճակատագրի վերաբերյալ պարզաբանումներ տալու մասին մնացին անպատասխան: Այս խնդիրը մնալու է հանձնաժողովի ուշադրության կենտրոնում:

Միևնույն ժամանակ չի կարելի շրջանցել այն փաստը, որ վերջին տարիներին ջրաօգտագործման դիմաց ստացվող վարձավճարների հավաքագրումը կտրուկ աճ է արձանագրել, որը կարելի է համարել նկատելի կազմակերպական առաջընթաց և որը ճիշտ աշխատանքի դեպքում կարող է լուրջ նախադրյալ դառնալ համակարգի հետագա զարգացման համար:

Պետք է նշել, որ ջրաչափերի զանգվածային տեղադրումը իրոք որոշակի ազդեցություն ունեցավ Երևանի ջրամատակարարման համակարգի վրա, և միշտ չէ, որ այդ ազդեցությունը կարելի է դրական գնահատել:

Ներկայումս յուրաքանչյուր բաժանորդ վճարում է իր կողմից օգտագործված ջրի դիմաց, երբ նախկինում վարձավճարի գումարը հաշվարկվում էր բնակարանում բնակվող անձանց թվի և համակարգով անցնող ջրի ծավալի որոշ տոկոսի բազմապատկման արդյունքում: Այս պատճառով ներկայումս նվազել են բնակարանային ջրաօգտագործման ծավալները՝ բաժանորդները հրաժարվել են նախորդ տարիների պրակտիկայից և այլևս ծորակների տակ հանքային ջուր և

ծմերուկ չեն սառեցնում, քանի որ դա կարող է զգալիորեն անդրադառնալ ջրի ամսեկան վարձավճարի և իրենց ընտանեկան բյուջեի վրա:

Արդյունքում հնարավորություն է ստեղծվել ջրի մատակարարման համակարգում ճնշման բարձրացման համար, քանի որ խողովակների վերջակետերը փակվում են:

Ինքնին խնայողությունը և նոր սովորությունների տարածումը բնակչության մեջ դրական երևույթ է, սակայն ջրի ճնշման աճը հնամաշ և չնորոգված խողովակներում առաջացրեց վթարների թվի կտրուկ ավելացում, որի մասին արդեն հիշատակել ենք:

Փաստորեն, ջրաչափերի արագ և մասայական տեղադրումը հասավ իր նպատակին՝ ջրի ճնշումը ցանցերում ավելացավ, բայց հնադարյան մեր խողովակները դրան չդիմացան: Արդյունքում ունենք վթարներ, ջրի կորուստներ, ախտոտված և վարակված ջուր:

Սրանք են այն արդյունքները, որոնց հասավ Օպերատորը՝ փորձելով ջրով ապահովել վերևի հարկերում բնակվող բաժանորդների ավելի մեծ քանակություն, առանց ցանցերի նորոգման լուրջ աշխատանքներ իրականացնելու:

Մեզանից յուրաքանչյուրը կարող է համոզվել դրանում՝ Երևանի փողոցներում ամեն օր վթարներ տեսնելով կամ նրանց մասին նախազգուշացումներ լսելով հեռուստատեսությամբ: Դա արձանագրված է նաև Օպերատորի 3-րդ տարվա հաշվետվության մեջ, համաձայն որի, բազիսային տարվա համեմատ՝ ջրատար խողովակների վթարների քանակը կրկնապատկվել է:

ՇԵՆՔԵՐԻ ՄՈՒՏՔԱԳԾԵՐԻ ՎՐԱ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԶՐԱԶԱՓԵՐ

Բացի բնկարանային ջրաչափերի տեղադրումից Օպերատորը առաջարկել է իրականացնել բազմաբնակարան շենքերի մուտքագծերի վրա ջրաչափերի տեղադրման ծրագիրը:

Ջրաչափերը տեղադրվել են յուրաքանչյուր շենքի մուտքագծի վրա և թույլ են տալիս ջրամատակարար ընկերությանը հաշվառել շենքի կողմից սպառվող ջրի ծավալները:

Այն դեպքում, եթե որոշ բաժանորդներ չեն վճարում օգտագործված ջրի դիմաց, ԵԶԿՓԲ ընկերությունը իրավունք ունի կրճատել ջրամատակարարման տևողությունը կամ դադարեցնել այն, և պետք է որ օգտվի իր այդ իրավունքից:

Սակայն դրա իրականացումը ուղղակի հնարավոր չէ: ԵԶԿՓԲԸ կողմից շենքերի մուտքագծերում տեղադրված ջրաչափերը, տարօրինակ կերպով, փականներ չունեն:

Այսպիսով, ջրամատակարարման դադարեցման միակ հնարավոր տարբերակը դա պոմպակայանի փականի փակելն է, որը, ի դեպ, հնարավոր էր անել և առանց ջրաչափերի տեղադրման:

Ուստի, շենքերի մուտքագծերում ջրաչափերի տեղադրման հետ կապված ծախսերի արդյունավետությունը մնում է լուրջ հարցականի տակ:

Մուտքագծերի ջրաչափերի տեղադրումը և ջրամատակարարման ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի համաձայն ԵԶԿՓԲԸ և համատիրությունների միջև կնքվող պայմանագրի: Հանձնաժողովի փորձագետները ուսումնասիրել են այս հարցը: ԵԶԿՓԲԸ գլխավոր տնօրենի խոսքերով 186 համատիրության հետ կնքված պայմանագրերը չեղյալ են համարվել և մշակվել է պայմանագրի նոր տարբերակ, որի կնքման գործընթացը գտնվում է վերջնական փուլում:

Մեջբերում ենք պայմանագրի նոր տարբերակի որոշ դրույթներ՝ կապված համատիրության այսինքն՝ բնակչության, նոր պարտավորությունների հետ:

**ԵԶԿՓԲԸ ԵՎ ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԵՎ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ
ՏԵՔՍՏԻ ՀԱՏՎԱԾ**

2.3. Կառավարիչը պարտավորվում է՝

2.3.6. Ապահովել շենքի (շենքերի) ընդհանուր օգտագործման գույք հանդիսացող ջրի պոմպերի պահպանությունը և կառավարումը, ինչպես նաև շենքի (շենքերի) մուտքագծի ջրաչափերի, ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի, սարքերի և սարքավորումների շահագործումը և սպասարկումը.

(ԵԶԿՓԲԸ ղեկավարության կողմից տրամադրված ԵԶԿՓԲԸ և համատիրությունների հետ կնքվող օրինակելի պայմանագիր):

Ինչպես տեսնում ենք, համատիրությունները պատասխանատվություն են ստանձնում բազմաբնակարան շենքերը սպասարկող ջրամատակարարման համակարգի համար, մասնավորապես ջրի պոմպերի համար, որոնք ապահովում են ջրի մղումը դեպի վերևի հարկերը:

Հարց է ծագում.

Հնարավոր է արդյո՞ք, որ համատիրություններին պարտադրեն վճարել շենքերի մուտքագծերի ջրաչափերի և դրանց տեղադրման արժեքը:

Ո՞վ պետք է վճարի լոկալ պոմպերի աշխատանքի ընթացքում ծախսված էլեկտրաէներգիայի վարձը և պոմպերի վերանորոգման ծախսերը:

Հնարավոր է արդյո՞ք, որ դա դառնա համատիրության պարտականությունը:

Այս հարցերի պատասխանը մենք չունենք:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ ԵԶԿ-ի և համատիրությունների պայմանագրի նոր տարբերակը լուրջ մտահոգություններ է առաջացնելու վերջիններիս անդամների մոտ: Պարզվում է, որ համատիրություններն են պատասխանատու դառնալու ոչ միայն մուտքագծերի ջրաչափերի ապահովության համար, բայց նաև խողովակների և պոմպերի: Սրանով է, հավանաբար, բացատրվում, որ ԵԶԿ-ին մուտքագծերի ջրաչափերի վրա փականներ չեն տեղադրել, «խնայելով» այն գումարը, որը հիմա պարտավորված կլինի ծախսել համատիրությունը: Չ՞է որ նա ստիպված է լինելու ազդեցության միջոց ստեղծել անպարտաճանաչ բաժանորդների վրա ազդելու համար:

Ինչպես արդեն նշվել է, շենքերի մուտքագծերի ջրաչափերի տեղադրումը պետք է իրականացվի համատիրության հետ պայմանագրի կնքումից հետո: Հանձնաժողովի փորձագետները դիմել են ԵԶԿՓԲԸ գլխավոր տնօրենին՝ համատիրությունների հետ կնքվող պայմանագրի կրկնօրինակը, ինչպես նաև պայմանագիր կնքած համատիրությունների ցուցակը ստանալու նպատակով: Սակայն, ինչպես երևում է նման պայմանագրեր համատիրությունների հետ կնքված չեն եղել, չնայած նրան, որ արդեն տեղադրվել է մոտ 6000 մեծ ջրաչափ:

ՎԱՐՉԱԿԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Ծրագրի իրականացման կազմակերպական և տեխնիկական թերությունների հայտնաբերումով չի սահմանափակվում հանձնաժողովի կատարված ուսումնասիրությունը:

Վարկային ծրագրի հիմնական փաստաթղթերի ուսումնասիրությունը անմիջապես նկատելի դարձրեց մի շարք վարչական խախտումներ, որոնք առաջին հայացքից կարող են անկարևոր թվալ: Սակայն, մեր կարծիքով, ծրագրի իրավական հիմքերը ստեղծելիս թույլ տված խախտումները լուրջ հետևանքներ են ունեցել:

Ներկայացվող դրվագները վերցված են այն ժամանակ ՀՀ Կառավարությանն առընթեր ջրային տնտեսության Պետական կոմիտեի նախագահ պրն. Գագիկ Մարտիրոսյանին մեր կողմից

ուղղված մամակից և մատնանշում են վերոհիշյալ
խախտումները:

- 1.1. «Ենթավարկային պայմանագիրը» կնքող կողմերից
մեկը՝ «Համայնքային զարգացման ծրագրի
ղեկավարման գրասենյակը» (ՀԶԾՂԳ) պաշտոնապես
գրանցված չի եղել «Ենթավարկային
համաձայնագրի» կնքման անսաթվի դրությամբ
(15.09.1998 թ.), այն գրանցում է ստացել ավելի ուշ՝
1998թ. դեկտեմբերի 17-ին:
- 1.2. «Ենթավարկային պայմանագրում» ՀԶԾՂԳ-ի կողմից
դրված կլոր կնիքը պատկանում է «Մունիցիպալ
զարգացման ծրագրի հրականացման գրասենյակին»,
որը ընդհանրապես երբեք գրանցում չի ստացել ՀՀ
պետական ռեգիստրում:
- 1.3. «Վարկային համաձայնագրում» նշված ԾՂԳ-ի
գրանցման համարն (286-120-03-194) ունեցող
կազմակերպություն ՀՀ պետական ռեգիստրի գրան-
ցամատյանում գոյություն չունի: Բացի այդ, ՀՀ
ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և ՀՀ
քաղաքաշինության նախարարության 06.05.1998թ.
թիվ 6 համատեղ որոշումը, ըստ որի ստեղծվել է այդ
ԾՂԳ-ն, ևս առկա չէ:

Վերլուծելով վերը նշված կետերը, պարզ է դառնում, որ
«Վարկային համաձայնագրի» և «Ենթավարկային
պայմանագրի» կնքման ժամանակ ծրագրի ղեկավարման
գրասենյակը գրանցված չի եղել և երկու պայմանագրերում
հիշատակված գրասենյակները ֆիկտիվ բնույթ են կրել:

Համայնքային Ջարգացման Ծրագրի Ղեկավարման
Գրասենյակ ՊՓԲԸ



(1998թ. սեպտեմբերի 15-ին կնքված «Ենթավարկային պայմանագիր»):

- 2.0. 1998թ. դեկտեմբերի 17-ին գրանցված ՀՀԾՂԳ-ը դա «Վարկային համաձայնագրում» նշված ԾՂԳ-ն չէ (ռեգիստրացիոն համարները տարբեր են): ՀՀԾՂԳ-ը նաև չէր կարող կնքել «Ենթավարկային պայմանագիրը», քանի որ ստեղծվել է պայմանագրի կնքման ամսաթվից ավելի ուշ:
- 2.1. Դրանից հետո ՀՀԾՂԳ-ը վերակազմավորվել է, դառնալով պետական հիմնարկ և ստանալով ոչ իրավաբանական անձի կարգավիճակ: Հետագայում ՀՀԾՂԳ-ը անցել է ՀՀ Կառավարությանն առընթեր ջրային Պետական կոմիտեի ենթակայության տակ:
- 2.2. 1998թ. դեկտեմբերի 17-ին գրանցված «Համայնքային զարգացման ծրագրի ղեկավարման գրասենյակ» Պետական ՓԲԸ-ն 2000 թ. հունվարից գտնվում է լուծարման գործընթացում, սակայն առ այսօր վերջնականապես լուծարված չէ: Կազմակերպության լուծարման ակտը ստորագրվել է Երևանի քաղաքապետի կողմից և լուծարային հանձնաժողովին տրվել 3 օր՝ լուծարումը ՀՀ կազմակերպությունների պետական ռեգիստրում գրանցելու համար:
- 3.0. ԵԶԿՓԲԸ կանոնադրական փաստաթղթերի ուսումնասիրության ընթացքում հայտնի դարձավ, որ ընկերությունը ևս վերակազմավորվել է և անցել ՀՀ

Կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի ենթակայության տակ:

3.1. Պետք է նշել, որ ԵԶԿՓԲԸ կանոնադրության վերջին խմբագրության համաձայն, որը գրանցվել է 2003թ. հոկտեմբերին, ընկերության գործադիր մարմնի դերը ստանձնել է իտալական «Էյ Յուրօլիթի» ընկերությունը (Օպերատորը):

3.1.1. «Էյ Յուրօլիթի» ընկերությունը կապված է ԵԶԿՓԲԸ-ի պայմանագրային պարտավորություններով և դրան գործադիր մարմնի ֆունկցիաների փոխանցումը կարող է առջացնել շահերի կոնֆլիկտ:

3.2. Համաձայն ԵԶԿՓԲԸ կանոնադրության՝ գործադիր մարմինը իրավունք ունի նշանակել և աշխատանքից ազատել ընկերության գլխավոր տնօրենին:

3.2.1. ԵԶԿՓԲԸ գլխավոր տնօրենի պաշտոնին նշանակվել է պրն. Լիչարդ Վոլկլինգը, որը զբաղեցնում էր Օպերատորի լիազոր ներկայացուցչի պաշտոնը:

3.2.2. Օպերատորի լիազոր ներկայացուցչի պաշտոնը ստանձնել է ԵԶԿՓԲԸ նախկին աշխատակից Հենզել Խաչատրյանը:

4.0. Փաստաթղթերի հետագա ուսումնասիրությունը բացահայտեց նաև այն փաստը, որ վարկի միջոցների փոխանցումը Վարկառուից (ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն)՝ Ենթավարկառուին (ԵԶԿՓԲԸ) չի կատարվել՝ խախտելով Ենթավարկային պայմանագրի պահանջը:

4.1. Հանձնաժողովի մասնագետները հասել են այս եզրակացությանը, ուսումնասիրելով KPMG անկախ աուդիտորական ընկերության կողմից կատարված հետազոտությունը, որից երևում է, որ ԵԶԿ-ի հաշվապահական հաշվեկշռում վարկային միջոցները ամբողջությամբ չեն արտացոլվում:

4.2. Վարկային միջոցների փոխանցման խնդիրը քննարկվել է ԵԶԿՓԲԸ գլխավոր տնօրեն պրն. Ռ.Վոլկլինգի և ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի փոխնախարար պրն. Դ. Ավետիսյանի հետ, որոնք

բանավոր համաձայնել են այն փաստի հետ, որ վարկային միջոցների փոխանցման ճիշտ ընթացակարգը չի իրականացվում:

- 4.3. Պր-ք Վոլկլինգը և Ավետիսյանը նաև հայտնել են այն մասին, որ Վարկառուի և Ենթավարկառուի միջև չի կնքվել գրավի պայմանագիր, ինչը ևս հանդիսանում է Ենթավարկային պայմանագրի պահանջ: Պրն. Դ. Ավետիսյանը հայտնել է նաև, որ այդ փաստի վերաբերյալ գրավոր պատասխան կներկայացնի Հանձնաժողովին:

Գրավի պայմանագրի խնդիրը քննարկվել է ս/թ փետրվարի 27-ին տեղի ունեցած ՎԴՄՕ ուսումնասիրող հանձնաժողովի նիստին, որին ներկա է գտնվել նաև ՀՀ Կառավարությանն առընթեր ջրային տնտեսության Պետական կոմիտեի նախագահ պրն. Գ. Մարտիրոսյանը: Ըստ պրն. Մարտիրոսյանի, 1998թ. սեպտեմբերի 15-ին կնքված Ենթավարկային պայմանագրի հիման վրա չէր կարող ստորագրվել գրավի պայմանագիր, քանի որ այդ ժամանակ ԵԶԿՓԲԸ ամբողջ գույքը արդեն գրավադրված էր ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի Նախարարությունից ստացված բյուջետային վարկը ապահովելու դիմաց: Պրն. Մարտիրոսյանը հայտնեց, որ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի Նախարարության հետ կքնված գրավի պայմանագիրը դադարել է գործել և մինչև ս/թ մարտ ամսվա վերջը կկնքվի նոր գրավի պայմանագիր, որով ԵԶԿՓԲԸ ամբողջ գույքը գրավ կդրվի ՀՀ Կառավարությանը՝ Համաշխարհային բանկի կողմից ստացված վարկային միջոցների դիմաց: Օրերս ՎԴՄՕ ուսումնասիրող հանձնաժողովին ներկայացվել են երկու գրավի պայմանագրերի կրկնօրինակները: Առաջինը՝ 1998թ. դեկտեմբերի 28-ին ԵԶԿՓԲԸ և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի Նախարարության միջև կնքված գրավի պայմանագիրն է, որը կնքվել է 1998թ. դեկտեմբերի 26-ին կողմերի միջև ստորագրված վարկային պայմանագրի հիման վրա: Փաստորեն, ԵԶԿՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի Նախարարությունից վարկ է ստացել ավելի ուշ, քան Համաշխարհային բանկից և կարող էր իր գույքը գրավ դնել Համաշխարհային բանկի կողմից ստացված 30 մլն. ԱՄՆ դոլար վարկի դիմաց: Հանձնաժողովին

հայտնի են դարձել նաև այլ փաստեր: Համաձայն ԵԶԿՓԸ և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքված գրավի պայմանագրի, վարկի գումարը կազմել է մոտ 960 մլն դրամ: Սակայն, KPMG անկախ աուդիտորական ընկերության 2002 թ. հաշվետվությունում նշված է, որ ԵԶԿՓԸ վարկային պարտավորությունը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության առջև կազմում է ավելի քան 9.5 միլիարդ դրամ: Բացի այդ անկախ ֆինանսական աուդիտորը գրում այն մասին, որ վարկը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից տրամադրվել է 1996 թ. և ապահովված չի եղել գրավով: Համաձայն KPMG-ի հաշվետվության, վարկի մարումը պետք է սկսվի 2004 թ. և ավարտվի 7 տարվա ընթացքում: Ինչպես հայտնի է, գրավի պայմանագրի գործողությունը դադարեցվում է պարտավորությունների լիակատար կատարման ավարտի հետ միասին: Այսինքն, ԵԶԿՓԸ և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության միջև կնքված գրավի պայմանագիրը կարող է իր ուժը կորցնել 2011 թ. և մինչև այդ ժամանակ, ԵԶԿՓԸ գույք չի կարող գրավ դրվել այլ պարտավորությունների դիմաց: Կարելի է ենթադրել, որ ԵԶԿՓԸ իր վարկային պարտավորությունները ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության առջև մարել է վաղաժամկետ: Հիմնվելով այս ենթադրության վրա հանձնաժողովը գրավոր դիմել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն վարկի մարումը հաստատող փաստաթղթերի ստացման համար: Սակայն դեռևս պատասխան չի ստացել:

Հանձնաժողովին ներկայացված երկրորդ գրավի պայմանագիրը կնքվել է ԵԶԿՓԸ և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության միջև 2004թ. մարտի 4-ի: Համաձայն 1998թ. սեպտեմբերի 15-ին կնքված ենթավարկային պայմանագրի պահանջների, Համաշխարհային բանկի վարկի դիմաց ԵԶԿՓԸ ընկերությունը գրավ է դնում իր բոլոր ակտիվները, ինչպես նաև ապագայում վարկային կամ այլ աղբյուրներից գոյացած լրացուցիչ ակտիվները: Մինչդեռ, մարտի 4-ին կնքված գրավի պայմանագրով ԵԶԿՓԸ գրավ է դրել միայն ընկերության սեփականություն հանդիսացող ավտոմեքենաները և այլ տեխնիկան, որոնց ընդհանուր գումարը չի գերազանցում 800 հազար ԱՄՆ դոլարը, ինչը առաջացնում է մտավախություն, որ

վարկային միջոցներով գնված ապրանքները, նյութերը և այլն պատշաճ կերպով չեն փոխանցվել ԵԶԿՓԲԸ հաշվապահական հաշվեկշռի վրա:

Ձեր ուշադրությունը չարաշահելով, ստիպված եղանք ներկայացնել այս բոլոր մանրամասները, քանի որ մեր կարծիքով ծրագրի մշակման և կազմակերպման փուլում թույլ տված վարչական խախտումները և անփութությունը համապատասխան մթնոլորտ են ստեղծել հետագա բոլոր շեղումների, և չարաշահումների համար:

Ակնհայտ է, որ ծրագրի իրականացման ընթացքը զգալիորեն տարբերվում է ծրագրի հռչակված սկզբնական նպատակներից: Գիշտ չի լինի ասել որ ծրագրի իրականացմանը ներգրավված կողմերը խախտել են կանոնները: Նրանք պարզապես փոխել են այդ կանոնները ծրագրի իրականացման ընթացքում, իրենց հարմար եղանակով: Հետևաբար, ծրագրի արդյունավետությունը գնահատելու համար, մենք պետք է պարզապես անտեսենք դրանում կատարված փոփոխությունները և պարզապես համեմատենք ծրագրի սկզբնական նպատակակետերը և այսօրվա դրությամբ ստացված արդյունքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի գլխավոր նպատակը հանդիսանում էր ապահովել Երևանի բաժանորդների կանոնավոր և որակյալ ջրամատակարարումը:

Սա պետք է իրականացվեր ջրամատակարարման ցանցի, այդ թվում լոկալ պոմպերի, վերանորոգման միջոցով:

ԵԶԿՓԲԸ-ից և Օպերատորից ստացված գրավոր տեղեկատվությունը ցույց է տալիս, որ ծրագրով նախատեսված նպատակները չեն իրականացվել, իսկ որոշակի ցուցանիշներ նույնիսկ վատթարացել են:

Ստացված փաստաթղթերը և ուսումնասիրությունը տեղերում վկայում են, որ կատարվել է զգալի շեղում ծրագրի սկզբնական նպատակներից:

Ջրատարների և խողովակների ինֆրակառուցվածքի բարելավման համար նախատեսված ներդրումները տեղաբաշխվել են և ուղղվել ջրաչափերի տեղադրման և այլ աշխատանքների ֆինանսավորմանը: Ընդ որում, ամբողջ ծրագրին ուղղված միջոցների 27%-ը կլանել է «մենեջմենտը», այն ինչ աշխարհում ընդունված նորմերով այդ թիվը պետք է կազմեր ծրագրի ընդհանուր արժեքի ընդամենը 2-ից 5%-ը:


* * *

Հանձնաժողովի կարծիքով Երևանի ջրամատակարարման բարելավմանն ուղղված Համայնքային զարգացման ծրագրի արդյունքները պետք համարել անբավարար, քանի որ ստացված արդյունքը չի համապատասխանում ներդրված միջոցներին: Ծրագրի իրականացման Օպերատոր հանդիսացող «Էյ. Յուրփիլիթի» կազմակերպության հետ պայմանագրի երկարաձգումը դիտում ենք ոչ նպատակահարմար:

Եվ մեկ վերջին դիտարկում:

Մենք հաճախ ենք լսում մեր պաշտոնատար պատասխանատուներից, որ նկարագրված ծրագրի և նման ծրագրերի միջոցով ստացվող գումարները տրամադրվում են այնքան գրավիչ պայմաններով, որ պարզապես անմտություն է նրանցից հրաժարվելը: Մանավանդ, որ պարտքի վճարումը սկսվում է միայն 10 տարի հետո և պետք է ամբողջությամբ մարվի 35 տարվա ընթացքում:

Այս տրամաբանությունը անթերի չէ, ինչպես ցույց է տալիս ներկայացվող գրաֆիկը:



(Տվյալների աղբյուր՝ Համաշխարհային Բանկի տվյալների բազա, 2003թ. դրությամբ):

Տարիների ընթացքում այսպիսի վարկային ծրագրերը կուտակել են մեր 1.2 մլրդ-ոց արտաքին պարտքը: Մուգ կապույտ գիծը ցույց է տալիս արտաքին վարկային միջոցների տարեկան ներհոսքի դինամիկան, որի հիմնական տեղեկանքը տանում է դեպի նվազում: Կարմիր գիծը ցույց է տալիս այդ պարտքերի սպասարկումը և 2003 թ. այն արդեն 20 միլիոնով գերազանցում է ստացվող գումարը: Այդ տարբերությունը կպահպանվի նաև 2004 թ.:

Արդեն այսօր մենք վճարում ենք վարկերի դիմաց ավելին, քան ստանում ենք, որքան էլ գրավիչ պայմաններով են տրամադրվում մեզ վարկերը: Ուրեմն դրանց օգտագործումը պետք է օժտված լինի մաքսիմալ արդյունավետությամբ: Նպաստել դրան մեր հանձնաժողովը համարում է իր հիմնական խնդիրը: